

ՊՐԱԿ

02

ՀՈՒՆԻՍ 2020




«ԲՐՅՈՒՍՈՎՅԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՅՈՒԴԱՐԸԸ



ԿԱՐԴԱՅԵՔ ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- Միջազգային ծրագրեր
- ԲՊՀ-ն համաճարակի դեմ պայքարի համատեքստում
- Coursera for Campus ծրագիր
- Մեջոնգ Հակդանգ դպրոց
- Հաջողության պատմություններ և հարցազրույցներ



Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2019թ.-ին Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանը (ԲՊՀ) շարունակել է միջազգային դրամաշնորհների ֆինանսավորմամբ կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրագործումը: Էրազմուս+ «Կարողությունների զարգացումը բարձրագույն կրթության ոլորտում» գործողության 2019թ-ի մրցույթի արդյունքում ԲՊՀ-ն ընդգրկվել է ևս երկու միջազգային ծրագրերում՝ «Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթության աշխատանքահեն ուսուցման ճկուն, նորարարական և գործնական շրջանակի մշակում» (FLEXWBL) և «Հայաստանում հետբուհական կրթության բարեփոխումը՝ ակադեմիական ու արդյունաբերական կարիքների և ԵՄ ներկայիս փորձին համահունչ» (ARMDOCT): Ավելին «Էրազմուս+» «Ժան Մոնե մոդուլ» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է «Հայաստանի և ԵՄ օրենսդրության մոտարկում (LegAL)» ծրագիրը: Ընդհանուր առմամբ ներկայումս բուհում իրականացվում է միջազգային 7 ծրագիր:



ԿԱՅԱՅԱՎ FLEXWBL ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

2019թ. դեկտեմբերի 16-ից 18-ը Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում (ՃՇՀԱՀ) և Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանում տեղի ունեցան Էրազմուս+ «Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթության աշխատանքահեն ուսուցման ճկուն, նորարարական և գործնական շրջանակի մշակում» (FLEXWBL) միջազգային ծրագրի մեկնարկային հանդիպումները: Ծրագրի գլխավոր նպատակը աշխատանքային հիմունքներով ուսուցման իրականացման համար հարթակ ստեղծելն է Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթության համակարգում: Հանդիպումները ծանուցողական բնույթ էին կրում և նպատակաուղղված է ներկայացնելու ծրագրի առաքելությունը, նպատակները, պլանավորված աշխատանքները և սպասվող արդյունքները, գործընկերների դերը և գործառույթները:



Մեկնարկային հանդիպմանը մասնակցեցին ներկայացուցիչներ Լատվիայի Լիեպայայի համալսարանից, Ռուսաստանի Պերմի պետական համալսարանից, Դոնի պետական տեխնիկական համալսարանից, «Էնիոստոլիո»-ից և Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման դաշնային ծառայությունների ոլորտի ադմինիստրատիվ աշխատողների և մասնագետների վերապատրաստման առաջադեմ ինստիտուտից, ՃՇՀԱՀ-ից, ԲՊՀ-ից, Գավառի պետական համալսարանից:



FLEXWBL ծրագիր

➤ *Տևողությունը*՝ 3 տարի

➤ *Բյուջեն*՝ 823.495 €

➤ *Համակարգող*՝

Լիեպայայի համալսարան
(Լատվիա)

➤ *Մասնակիցները*՝

- 2 ԵՄ բարձրագույն ուսումնական հաստատություն
- 3 ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություն
- 3 ՌԴ բարձրագույն ուսումնական հաստատություն
- 1 ՌԴ գիտահետազոտական ինստիտուտ

ԲՊՀ-Ն ԿՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ

2020թ. -ի փետրվարի 4-ին և 5-ին Եվրասիա միջազգային համալսարանում մեկնարկեց «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» **ARMDOCT** ծրագիրը:

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանը հանդիսանում է **ARMDOCT** ծրագրի կոնսորցիումի անդամ և միևնույն ժամանակ համակարգելու է երկրորդ աշխատանքային փաթեթը, որը միտված է դոկտորական կրթության համակարգի բարելավմանը Հայաստանում:



ԲՊՀ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության ղեկավար Քրիստինա Ծատուրյանը, լինելով **ARMDOCT** ծրագրի համակարգողը բուհում, Եվրասիա միջազգային համալսարանում ներկայացրեց ծրագրի երկրորդ աշխատանքային փաթեթի մեկ տարվա համար նախատեսվելիք նախագծերը, գործողությունները ու ակնկալիքները:

ARMDOCT ծրագիրը նպատակ ունի բարեփոխելու դոկտորական կրթությունը Հայաստանում Ջալբուրգի սկզբունքներին համահունչ՝ ազգային քաղաքականության և իրավական կարգավորող փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և տնտեսության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով:

Ծրագիրը միտված է խթանելու բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերական ոլորտի սերտ համագործակցությունը՝ ուղղված դոկտորական կրթության միջազգայնացմանը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (EHEA) և Եվրոպական բարձրագույն հետազոտական տարածքին (ERA) ինտեգրմանը:



REFORM

loading...

ARMDOCT ծրագիր

➤ *Տևողությունը՝* 3 տարի

➤ *Բյուջեն՝* 966.177 €

➤ *Համակարգող՝*

Եվրասիա միջազգային համալսարան (ՀՀ)

➤ *Մասնակիցները՝*

- 4 ԵՄ բարձրագույն ուսումնական հաստատություն

- 8 ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություն

- 2 ՀՀ գիտահետազոտական ինստիտուտ

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

➤ *Հղումներ*

<http://www.armdoct.com>

<https://www.facebook.com/armdoct>

«ԺԱՆ ՄՈՆԵ ՄՈՂՈՒԼ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

ԲՊՀ-ն շարունակում է տարբեր տարածաշրջանների բարձրագույն կրթության տարածքներին բուհի ինտեգրման և համագործակցության ընդլայնման գործընթացները:

2019թ.-ին կնքվել է 26, իսկ 2020թ.-ին արդեն 10 համագործակցության պայմանագիր, մասնավորապես.

- «Էրազմուս+» միջինստիտուցիոնալ և դրամաշնորհային պայմանագրեր (Եվրոպա)
- Ժան Մոնե մոդուլ (Jean Monnet Erasmus+) (Եվրոպա)
- Դրամաշնորհային պայմանագիր Էսսեքսի համալսարանի հետ /Ստեղծարար միտք/ (Մեծ Բրիտանիա)
- Ա. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ պայմանագիր, Սոցիալական և տնտեսական գիտությունների Մոսկվայի բարձրագույն դպրոցի հետ պայմանագիր (Ռուսաստան)
- Կոնֆուցիուսի ինստիտուտների գլխամասային գրասենյակի (Հանբան) հետ կնքված 2 պայմանագիր (Չինաստան)



Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանում շարունակվում է ԵՄ-ի «Էրազմուս Մոնդուս» ծրագրի շրջանակներում «Ժան Մոնե մոդուլ» եռամյա ծրագրի (2017-2020թթ.) իրականացումը ԲՊՀ-ի «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի կողմից:


2019թ.-ին ԵՄ «Էրազմուս+»-ի «Ժան Մոնե մոդուլ» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է «Հայաստանի և ԵՄ օրենսդրության մոտարկում (LegAL)» (2019-2022թթ) մոդուլը, որը նախատեսված է որպես ԵՄ իրավունքի և ԵՄ օրենսդրությունը տեղական իրավակարգի մեջ ներառելու մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքների կենտրոն: Դրա շրջանակներում իրականացվելու են «Օրենսդրական մոտարկման լաբորատորիա» թեմայով դասընթաց, ամառային դպրոց, սեմինար օրենսդրական հիմնախնդիրներով և քաղաքականությամբ զբաղվող մասնագետների համար, ինչպես նաև «Հայկական օրենսդրության եվրոպականացումը. խնդիրները և մարտահրավերները» թեմայով հետազոտական աշխատանք: Ծրագրի համակարգողն է ԲՊՀ-ի «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի դոցենտ Աննա Խվորոստյանկինան:

2019թ հոկտեմբերի 15-ին ԲՊՀ-ում տեղի ունեցավ LegAL մոդուլի բացման արարողությունը, որի նպատակն էր շեշտարարել ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) համատեքստում իրավական մոտարկման գործընթացների կարևորությունը, ներկայացնել նոր մոդուլի հնարավոր շահագրգիռ կողմերին և ողջունել մոդուլի ուսանողների առաջին հոսքը:




ԲՊՀ ՄԻՉԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԸ

ԵՄ-ի «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության միջբուհական համաձայնագրերի շրջանակներում 2019թ.-ին Վ. Բյուսովի անվ. պետական համալսարանի 12 ուսանող, իսկ 2020թ.-ին 9 ուսանող հնարավորություն են ստացել 1 կիսամյակ ուսումնառել գործընկեր բուհերում, իսկ 3 օտարերկրյա ուսանող՝ ԲՊՀ-ում: 2019թ.-ին 16 վարչական աշխատող և դասախոս հնարավորություն են ստացել՝ անցնելու մասնագիտական վերապատրաստումներ, կարդալու դասախոսություններ և իրականացնելու փորձի փոխանակում: ԲՊՀ-ում նույն ծրագրի շրջանակում դասավանդել կամ վերապատրաստում են անցել 9 դասախոս կամ վարչական աշխատակից գործընկեր համալսարաններից:



Գծ.1. Ուսանողների «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունությունը



Գծ.2. 2019թ. վարչական և ՊԴ կազմի Էրազմուս+ միջազգային շարժունությունը

Ֆրանսիայի **Փարիզ-Սորբոն 4 համալսարանի** հետ համատեղ մագիստրոսական և դոկտորական ծրագրերը՝ «Համեմատական գրականություն» ու «Հրատարակչական գործ» մասնագիտություններով, որոնցով ներկայումս Փարիզ-Սորբոնի համալսարանում սովորում է **1 մագիստրոս** և **3 ասպիրանտ**:

Գերմանիայի **Հալլե Վիթենբերգի Մարտին Լյութերի** համալսարանի հետ «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ համատեղ դոկտորական ծրագիրը, որով 2019թ.-ին Հալլեի համալսարանում սովորել է **1 ասպիրանտ**:

ԱՊՀ-ի ցանցային համալսարանի համագործակցության ծրագրի շրջանակում **1 ուսանող** սովորում է **Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի (РГУДН)** համատեղ մագիստրոսական ծրագրում՝ «Միջմշակութային հաղորդակցությունը տուրիզմում» մասնագիտությամբ:

ԲՊՀ-Ն COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ



2020թ. մարտի 16-ից Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը անցել է ուսումնական գործընթացը հեռավար կազմակերպելուն՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Յուրաքանչյուր օրվա դասախոսությունների և գործնական աշխատանքների նյութերը ուղարկվում են ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեներին, իսկ դասախոսներն

ապահովում են հետադարձ կապը՝ անցկացնելով առցանց դասախոսություններ և քննություններ: Ուսանողների հեռավար ուսուցումը արդյունավետ անցկացնելու և անհրաժեշտ գրականությամբ ապահովելու նպատակով անխափան աշխատում է ԲՊՀ գրադարանը՝ ուսանողներին ներկայացնելով համացանցում առկա գրականության բաց աղբյուրներ:

Նոր իրավիճակը միջազգայնացման առումով, օրինակ, գործընկեր համալսարանների ցանցի և բազմաթիվ գիտական, մշակութային կենտրոնների, հիմնադրամների հետ համագործակցությունը դարձրել է առավել հրատապ ու համակարգված. ուսանողների և անձնակազմի համար ստեղծվել են հնարավորություններ՝ զբաղվելու իրենց անհատական զարգացմամբ, մասնակցելու կատարելագործման հեռավար դասընթացների, պրակտիկաների, վեբինարների և օգտագործելու իրենց կողմից ձեռքբերված գիտելիքները համաշխարհային մակարդակով՝ շփվելով և սովորելով ոլորտի առաջատարներից:

Հեռավար ուսուցումը ևս մեկ անգամ ընդգծեց միջազգային գործընկերային մեծ ցանց ունենալու և նրանց հետ ակտիվ համագործակցության անհրաժեշտությունը, որի շնորհիվ էլ մեր ուսանողները կարողացան օգտագործել իրենց ժամանակի ավելցուկը՝ նոր հմտություններ ձեռք բերելով:

- Ուսանողները պարբերաբար շարունակում են ստանալ կրթաթոշակի հնարավորության առաջարկներ, մասնագիտական պրակտիկաներ անցնելու հրավերներ, իրենց կրթությունը շարունակելու առաջարկներ արտասահմանյան մի շարք բուհերից:
- Ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու «Մեծ գաղափարների մարտահրավեր» (Big Idea Challenge) մրցույթին՝ անցնելով վեբինարների շարք
- Ուսանողներին ներկայացվեց «Կուրսերան համալսարանի համար» /Coursera for Campus/ ծրագիրը, որն աննախադեպ հնարավորություն է՝ հեռավար կրթության միջոցով ծանոթանալու աշխարհի առաջատար համալսարանների առաջարկած ծրագրերին և դառնալու դրա մասնակիցը:
- «Էրազմուս +» գործընկերների հետ միասին կազմակերպվեց «Դեմ առ դեմ դասավանդումից անցում դեպի հեռավար կրթության» (Transition from face-to-face teaching to online education) խորագրով անվճար վեբինարների շարք՝ ներկայացված բուհի ակադեմիական անձնակազմի համար:

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի միջոցիսցիպլինար ուսումնասիրությունների կենտրոնը առցանց դասավանդման և ուսուցման նոր հնարավորություններ է ստեղծել ԲՊՀ ուսանողների և անձնակազմի համար: Կուրսերայի կորոնավիրուսին արձագանքելու նախաձեռնության շրջանակում ԲՊՀ-ին տրվել է լիարժեք մուտք **Coursera for Campus** ծրագրին:

Սկսած 2020 թվականի ապրիլից՝ ԲՊՀ-ն ազատ մուտք ունի ավելի քան 3800 դասընթացներ և 400 մասնագիտացումներ ունեցող **Coursera**-ի շտեմարան, որը տրամադրում են **Coursera**-ի գործընկերները: Այս մուտքը հասանելի է մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը: Այն ուսանողները, որոնք կընդունվեն մինչև հուլիսի 31-ը ներառյալ, կշարունակեն օգտվել դասընթացներից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը:

Իսկ դու գիտե՞ս:

79%

Coursera-ի դասընթացներին մասնակցած և վկայական ստացած շրջանավարտները ունեցել են առաջխաղացում աշխատավայրում

80%

Coursera-ի դասընթացների շրջանավարտները ձեռք են բերել աշխատանքի վայրում պահանջարկ ունեցող կարևոր հմտություններ

95%


Կրկին կմասնակցեն այլ դասընթացի

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանը գրանցել է ևս մեկ հաջողություն: Մեծ ջանքերից հետո, վերջապես կորեական ամենահայտնի դպրոցներից մեկը՝ **Մեջոնգ Հակդանգը (King Sejong Institute)**, Հայաստանում է, Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանում: Սա նշանակում է, որ բոլորը, անկախ տարիքից, կարող են ուսումնասիրել խորացված կորեերեն՝ առանց համալսարան ընդունվելու:

Ցանկացողները դպրոցում կուսումնասիրեն.

- կորեերեն,
- կորեական մշակույթ,
- կորեական ազգային մարզաձև՝ թաեքվոնդո:

Դասերը անցկացվելու են Կորեայում վերապատրաստված հայ և լեզվակիր մասնագետների կողմից, իսկ դասերի ավարտին շնորհվելու են Մեջոնգ Հակդանգի համապատասխան ավարտական վկայականները: Մեջոնգ դպրոցի բոլոր սովորողները հնարավորություն կունենան մասնակցել տարատեսակ միջոցառումների, մրցույթների, ստանալ բազմաթիվ նվերներ և ինչու ոչ՝ հնարավորության դեպքում կրթությունը շարունակել Կորեայում:



ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԻԱՆԱ ՊԱՊՈՅԱՆԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



«Հաջողության պատմություններ» հոդվածաշարի մեր առաջին հերթուր Բուլղարիայի «Նեոֆիտ Ռիլսկի» Հարավարևմտյան համալսարանի դոկտորանտ **Դիանա Պապոյանն** է, ով հայրենիք է եկել «ՀՀ Կառավարության և Բուլղարիայի Հանրապետության Կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2018-2022թթ. համագործակցության մասին» ծրագրի շրջանակներում եռամսյա մասնագիտացման կրթաթոշակային ծրագրին մասնակցելու և իր գիտական աշխատանքի համար նյութեր հավաքագրելու նպատակով:

- Դիանա, ինչպե՞ս դիմեցիք կրթաթոշակային ծրագրին և ինչպե՞ս կատարվեց երկրի ընտրությունը:

- Ես, լինելով Բուլղարիայում բնակվող հայ պատմաբան, մշտապես հետաքրքրված եմ եղել Հայկական հարցով և դրա ուսումնասիրմամբ ու բարձրաձայնմամբ: Իմ գիտական հետազոտությունն առնչվում է Հայկական հարցին ռուսական քաղաքականության համատեքստում: Հայաստանը անփոխարինելի էր ինձ համար, քանի որ ինձ անհրաժեշտ աղբյուրներ Բուլղարիայում բացակայում են: Շատ դժվար է հետազոտողի համար այսպիսի թեմայի շուրջ այնտեղ աշխատելը, ուստի Հայաստան այցելելը կարելի է ասել հրամայական էր ինձ համար:

- Ի՞նչ տվեց Ձեզ եռամսյա մասնագիտացման կրթաթոշակային ծրագիրը ԲՊՀ-ում:

- Նախ ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ԲՊՀ-ի ողջ անձնակազմին՝ թե վարչական, թե պրոֆեսորադասախոսական կազմին, որոնք իմ այստեղ գտնվելու առաջին օրվանից սկսած աջակցել են ինձ ամեն կերպ: Պետք է նշեմ, որ ԲՊՀ-ն ունի շատ հարուստ գրադարան և արխիվ: ԲՊՀ-ի գրադարանի և «Բրյուսովյան գիտական կենտրոն»-ի ֆոնդերի տրամադրած նյութերը համալրեցին իմ հետազոտության գրականության ցանկը, հատկապես XX դարի սկզբում հրատարակված "Армянский вестник" ամսագրի հավաքածուն, որը համարվում է հազվադեպ հրատարակություն և առկա է շատ քիչ գրադարաններում:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք Բուլղարիայում ապրող Ձեր ընկերներին, ովքեր կցանկանան հետազոտություն կատարել Հայաստանում:

- Ասեմ, որ Բլագոնգրադի «Նեոֆիտ Ռիլսկի» համալսարանում, որտեղ ես եմ ուսանում, ունեմ բազմաթիվ գործընկերներ, որոնք հետաքրքրված են Հայաստանով և նրա պատմությամբ: Նրանց ես միանշանակ խորհուրդ կտամ այցելել ԲՊՀ-ի՝ իսկապես շատ հարուստ գրադարանը, արխիվը, որտեղից կարող են քաղել մեծածավալ տեղեկատվություն իրենց ուսումնասիրությունների համար, ինչպես նաև հանդիպել աջակցելու պատրաստ մասնագետների:

«Հաջողության պատմություններ» հոդվածաշարի մեր հաջորդ հերոսը **Հայկ Համբարձումյանն** է: Նա Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Անգլերենի թարգմանության և հաղորդակցման ամբիոնի դասախոսներից է, ով կիսվում է արտասահմանում դասավանդելու իր փորձառության մասին:

- Հայկ, ո՞ր համալսարանում անցավ Ձեր դասախոսական շարժունության ծրագիրը:

- Շարժունակության ծրագիրը նախատեսում էր մեկ շաբաթյա փորձառություն և դասավանդում Ռուսիայի Սիբիրի «Լուչիան Բլազա» համալսարանում:

- Ինչպե՞ս կնկարագրեք Ձեր փորձառությունը այնտեղ: Արդյո՞ք հեշտ է հյուրընկալվել օտար համալսարանում, և ավելին՝ նաև դասավանդել օտարազգի ուսանողների:

-Իհարկե, հեշտ չէ, սակայն Լուչիան Բլազայում կարողացա արագորեն հարմարվել համալսարանի աշխատանքային ռիթմին: Հարկ է նշել, որ այդ հարցում ինձ աջակցեցին համալսարանի աշխատակիցները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ մշտապես լինելով հասանելի, տրամադրելով անհրաժեշտ տեղեկություն և ծանոթացնելով համալսարանի կառուցվածքին, ինչը թույլ տվեց առանց որևէ խոչընդոտի անցնել իմ բուն նպատակի իրագործմանը, այն է՝ թարգմանության ոլորտում դասախոսությունների իրականացում և դրանց արդյունքների գնահատում: Զուգահեռ, իհարկե, կային նաև այլ նպատակներ՝ ծանոթություն ռումինացի իմ գործընկերների հետ և գիտելիքի ու փորձի փոխանակում: Շարժունության ծրագրի շրջանակներում ես հանդես եկա ընդհանուր ութժամյա դասախոսություններով՝ նվիրված թարգմանական տեխնոլոգիաների ուսումնասիրությանը և թարգմանության ոլորտում կիրառական և միջգիտակարգային հետազոտություն կատարելուն:



-Ինչպե՞ս կգնահատեք Ձեր փորձառությունը: Ի՞նչ տվեց այն անձնապես Ձեզ և համալսարանին:

-Չեմ կարող չնշել, որ ես հաջողությամբ կարողացա իրագործել իմ առաջ դրված նպատակները: Իմ դասախոսական շարժունության ծրագրի մաս էր կազմում նաև ակադեմիական շարժունության և միջազգային կապերի հաստատման թեմայով աշխատաժողովը, որին մասնակցեցի Ռուսիայում: Իմ փորձով և շարժունության մասին տպավորություններով ուսանողների հետ կիսվելու համար սա հիանալի հարթակ էր: Ընդհանուր առմամբ, այս ծրագիրը



հնարավորություն տվեց ընդլայնել ռումինացի իմ գործընկերների հետ համագործակցության շրջանակները, և կասկածից վեր է, որ փորձառությունն էլ ավելի ամրապնեց Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի և Սիբիրի Լուչիան Բլազա համալսարանի միջև համագործակցությունը:



ՄԵՐԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Հաջողության պատմություններ» հոդվածաշարը անդրադարձ է կատարել արտերկրում սովորող հայ, ինչպես նաև ՀՀ-ում հյուրընկալված մեր արտասահմանցի ուսանողներին **«5 հարց արտերկրում կրթության մասին և ոչ միայն»** ձևաչափով, որի միջոցով ուսանողները կիրենց արտասահմանյան փորձառության և կորոնավիրուսի համաճարակին դիմագրավելու իր եղանակների մասին:

Եվ այսպես, մեր առաջին հերոսն է ԲՊՀ Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհի **Մերի Ղուկասյանը**: Նա այժմ սովորում է Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանում (РУДН) համատեղ մագիստրոսական ծրագրում՝ «Միջմշակութային հաղորդակցությունը տուրիզմում» մասնագիտությամբ: :

1. Ինչպե՞ս որոշեցիք սովորել արտերկրում: Ո՞րն էր այդ որոշման հիմնական պատճառը:

Ի սկզբանե, չէի պատկերացնում, որ կարող եմ ուսումնառել արտերկրում, սակայն երբ հնարավորություն ստացա սովորելու Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանում (РУДН)՝ անմիջապես համաձայնվեցի: Համալսարանը հայտնի է իր բազմամշակութային ուղղվածությամբ, ինչպես նաև բավականին բարձր կարգավիճակ ունի աշխարհի համալսարանների ցուցակում, իսկ այդպիսի հոչակ ունեցող համալսարանում սովորելը ցանկացած ուսանողի համար, մեծագույն պատիվ է: Իհարկե, կային շատ ավելի պարզ պատճառներ, ինչպիսիք են օրինակ՝ աշխատանքի ընդունվելու ավելի մեծ հեռանկարները, հնարավորությունը ծանոթանալու նոր մշակույթի, ոսուցանման նոր մեթոդների, ինչպես նաև, պարզապես նոր երկրի հետ և իհարկե ամենակարևորը՝ ինքնահաստատվելու ցանկությունը:

2. Ի՞նչն է Ձեզ ամենաշատը/ամենաքիչը դուր գալիս արտերկրում:

Ամենաշատը հավանել եմ միջմշակութային ընկերական միջավայրը, որը ստեղծվել է միասին սովորելու, խմբակային աշխատանքներ կատարելու, միասին մշակութային արժեքներ ունեցող վայրեր հաճախելու և վերջապես միևնույն հարկի տակ ապրելու շնորհիվ: Հավանում եմ նաև տեղի բնակչության ազատամտությունը, այստեղ կոմպլեքսներից ազատվելու ամենահարմարավետ պայմաններն են ստեղծված, քանի որ չկա հայերին բնորոշ քննադատական մտածելակերպ: Եվ վերջապես, բավականին մեծ առաջադիմություն կա ինֆորմացիոն և ուսուցման ոլորտում. գրեթե բոլոր լսարանները ապահովված են բարձրագույն տեխնոլոգիաներով, որը հնարավորություն է տալիս ուսուցումն իրականացնել ավելի վիզուալ և իհարկե դյուրին պայմաններում: Համալսարանում կան որոշակի կազմակերպչական և տեխնիկական թերացումներ՝ կապված դասացուցակի և օնլայն հարթակի հետ, որտեղ կատարվում և գնահատվում են տնային հանձնարարությունները:

3. Ինչպիսի՞ առավելություններ տվեց Ձեզ ուսումը արտերկրում: Ի՞նչ սպասվորություններ կառանձնացնեք:

Արտերկրում սովորելով՝ նախ և առաջ ձեռք բերեցի ընկերներ տարբեր երկրներից: Ծանոթացա նոր մշակույթների, նրանց առանձնահատկությունների և նմանությունների հետ: Իհարկե ստացա նորանոր գիտելիքներ, ծանոթացա ուսուցման նոր մեթոդների հետ: Իմ ուսումնառության ամբողջ ընթացքում, սովորեցի մասնագիտական առարկան կիրառման մեջ, այլ ոչ թե լոկ տեսական տարբերակով: Որպես ամենահիշարժան օր, թերևս կարող եմ առանձնացնել առաջին օրս համալսարանում, երբ ներս մտնելով լսարան, միանգամից հանդիպեցի թվով այդքան շատ տարբեր երկրների ներկայացուցիչներ: Սկզբում նրանք այնքան սառն էին, սակայն բավական էր ընդամենը մի քանի շաբաթ, և բոլորն էլ դարձան ջերմ ու սիրալիր: Մյուս հիշարժան օրս կապված է Մեծ թատրոնի հետ: Առաջին անգամ լինելով այդ հսկայական շենքում՝ ամբողջ մարմնով զգացի մշակույթի ուժն ու կարևորությունը, իսկ ամենահաճելին այն էր, որ այդ հրաշքը վայելում էի արդեն հարազատ դարձած օտարերկրյա հասակավորսեցիներին հետ:

4. Դուք ստացել էք անհրաժեշտ աջակցությունը ընդունող երկրում, և ի՞նչ աջակցության կարիք ամենաշատը ունեք:

Առանձնապես աջակցության կարիք չեմ ունեցել, իսկ այն բոլոր պարտականությունները, որ երկիրը կրում է օտարերկրացու ուսումը լիովին իրականացնելու համար, ամբողջությամբ կատարվել են:

5. Դիմագրավել ԲՈՎԻԴ 19-ին՝ լինելով օտար երկրում. ի՞նչ է սա Ձեզ սովորեցրել:

Այս ինքնամեկուսացման շրջանը բավականին ծանր էր, հատկապես այն պատճառով, որ բացի համընդհանուր ընդունված կանոններից, հանրակացարանն իր հերթին որոշ սահմանափակումներ էր ավելացրել, արդյունքում՝ մինիմալացնելով շփումը արտաքին աշխարհի հետ: Իրականում բավականին դժվար էր գարնանային արևոտ օրերը անցկացնել սենյակում նստած, այն դեպքում, երբ գտնվում ես օտար երկրում, որտեղ դեռ այնքան գեղեցիկ տեղեր կան այցելելու համար: Բայց, իհարկե, այս համաճարակը հնարավորություն տվեց հասկանալու, որ կյանքը ինքնին անկանխատեսելի է, և որ պետք է գնահատել այն բոլոր հնարավորությունները, որ այն քեզ տվել է, քանի որ չես հասցնի աչքդ թարթել և այն կլիլի քեզնից այդ հարատև թվացող առավելությունները: Ապրելով օտար երկրում՝ սկսեցի էլ ավելի գնահատել մարդկային ռեսուրսի կարևորությունը: Բարեբախտաբար սենյակակիցներս շատ դրական ու բարի մարդիկ են, ովքեր իրենց ջերմությամբ և անմիջականությամբ ստիպում են մոռանալ մեկուսացման և կարոտի մասին: Իսկ ինչ վերաբերում է դասընթացներին օնլայն հարթակում, բավականին մեծ աշխատանք է կատարվել, որպեսզի ուսուցման որակը դրանից չտուժի և այս իրավիճակը ավելի ռացիոնալ օգտագործվի: Այնպես որ, թեպետ համաճարակը ինքնին քառս էր բացասական իմաստով, սակայն վերջինիս ազդեցությունն իր դրական հետևանքները նույնպես թողեց:



«5 հարց արտերկրում կրթության մասին և ոչ միայն» հոդվածաշարի մեր հաջորդ մասնակից **Էլենա Կալվետե Կասսիուան** Հայաստան է ժամանել Իսպանիայի Գրանադայի համալսարանից՝ Էրազմուս + միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում և 1 կիսամյակ ուսանելու է Վ. Բոյուտովի անվ. պետական համալսարանում: Նրան վիճակված էր COVID-19 համաճարակի բարդ ժամանակաշրջանը անցկացնել իր համար օտար երկրում, որը, սակայն, ըստ Էլենայի՝ արդեն իսկ հասցրել է հարազատ դառնալ իրեն:



1. Ինչպե՞ս որոշեցիք սովորել արտերկրում: Ո՞րն էր այդ որոշման հիմնական պատճառը:

Հիմնական պատճառն ակադեմիական կենսունակությունն էր. առաջ ես Հայաստանի մասին բացարձակապես ոչինչ չգիտեի:

2. Ի՞նչն է Ձեզ ամենաշատը/ամենաքիչը դուր գալիս արտերկրում:

Ամենից շատ ինձ դուր է գալիս, այն է, թե որքան լավն է ժողովուրդը, պատմությունը իրենց բնատեսարաններում և մարդկանց կյանքը վայելելու ցանկությունը, նրանք միշտ պատրաստ են դուրս գալ և տոնել: Շատ բարդ է ասել, թե ինչն է ինձ ամենաքիչը դուր է գալիս, քանի որ սա մի երկիր է, որը ինձ շատ բան է տվել: Միգուցե իմ երկրում որոշ բաներ տարբեր են, բայց դա չի ստիպում ինձ չսիրել դրանք, պարզապես, այն պատճառով, որ դրանք ինձ համար նոր են: Ինձ դուր չի գալիս այն, որ այստեղ աշխատավարձերը շատ ցածր են, օրինակ, ուսուցիչների դեպքում: Կարծում եմ, որ նրանք պետք է ավելի շատ գումար վաստակեն, քանի որ կրթությունն էական է յուրաքանչյուր հասարակությունում:

3. Ո՞րն է Հայաստանի ընդհանուր ընկալումը Ձեր հայրենիքում: Արդյո՞ք այդ պատկերացումները ճիշտ են այժմ՝ ամիսներ շարունակ Հայաստանում ապրելով:

Ընդհանրապես, Հայաստանը Իսպանիայում կամ գոնե իմ շրջապատի մարդկանց այնքան էլ հայտնի չէ: Առաջին բանը, որ սովորաբար մտածում ես, այն է, որ այն աղքատ երկիր է, կոնֆլիկտներով և որտեղ չէիր ուղևորվի հաճույքների համար: Բայց սոցիալական ցանցերի միջոցով ես բազմաթիվ հաղորդագրություններ եմ ստացել, որ այն անհավատալի երկիր է, և իմ ընկերները նույնպես կցանկանային այցելել: Պարզվեց, որ ընկերներս, նույնպես, գնել էին իրենց ավիատոմսերը և ցանկանում էին գալ Հայաստան, բայց նրանց թոփչքները չեղյալ հայտարարվեցին կորոնավիրուսի պատճառով: Ես սովորաբար որևէ երկրի մասին վատը չեմ մտածում, կցանկանայի ճանապարհորդել աշխարհով մեկ: Առաջին իսկ օրվանից ես շատ ոգևորվեցի Հայաստանի մասին ավելին իմանալու ցանկությամբ: Ես դեռ այստեղ եմ և արդեն մտածում եմ, թե երբ է լինելու իմ հաջորդ այցը: Ես իսկապես սիրում եմ Հայաստանը:




4. Արդյո՞ք պատշաճ աջակցություն եք ստացել Հայաստանում, և ի՞նչ աջակցության կարիք ամենաշատը ունեք:

Ես միշտ ասում եմ, որ Հայաստանում ես ինձ տանը եմ զգում, երբևէ այլ երկրում ինձ այդքան լավ չէին վերաբերվել: Մարդիկ, առանց իմ հարցման, ցանկանում են օգնել ինձ, նույնիսկ առանց ինձ ճանաչելու: Ես ինձ շատ պաշտպանված և շատ սիրված եմ զգում: Միգուցե կուզենայի հանդիպել իսպանացիների, քանի որ մենք միշտ կարոտում ենք մեր երկիրը և մեր ժողովրդին:

5. Դիմագրավել ՔՈՎԻԴ 19-ին՝ լինելով օտար երկրում. ի՞նչ է սա Ձեզ սովորեցրել:

Կորոնավիրուսի ընթացքում Հայաստանը ինձ ցույց է տվել իր ժողովրդի մեծ սիրտը: Եվ իմ համալսարանը, և՛ իմ ընկերները միշտ հետաքրքրվել են իմ առողջությամբ՝ չհաշված, որ տնից դուրս գալ և շփվել հնարավոր չէր: Ես շատ լավ զգում եմ այն մարդկանց հոգատարությունը և աջակցությունը, որոնց գրեթե չեմ ճանաչում:



ՀՐԱՆՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



«5 հարց արտերկրում կրթության մասին և ոչ միայն» հոդվածաշարի մեր հաջորդ մասնակիցը **Հրանուշ Խաչատրյանն** է: Նա Էրազմուս + միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում մեկնել էր Իտալիայի Վերոնայի համալսարան՝ 1 կիսամյակ ուսումնառելու համար: Սակայն COVID-19 համաճարակի պատճառով ընդամենը 1 ամսից հարկադրաբար վերադարձավ Հայաստան՝ այժմ սովորելով հեռավար ուսուցմամբ:

1. Ինչպե՞ս որոշեցիք սովորել արտերկրում: Ո՞րն էր այդ որոշման հիմնական պատճառը:

Արտերկրում սովորելու ցանկություն միշտ եմ ունեցել:

Իտալիայի, իտալերեն լեզվի հանդեպ ունեցած սերս դարձավ որոշմանս հիմնական պատճառը:

2. Ի՞նչն է Ձեզ ամենաշատը/ամենաքիչը դուր գալիս արտերկրում:

Հավանում եմ նոր միջավայրը, տեղի մարդկանց, իրենց ջերմությունն ու սրտաբացությունը: Չեմ սիրում սկզբնական շրջանը, երբ շատ բաներից անտեղյակ ես, փորձում եմ հարմարվել, հունի մեջ ընկնել: Դժվար եմ հարմարվում կլիմայի հետ. հատկապես ամռանը, երբ օդում խոնավություն կա, ու չեմ սիրում իրենց առաջին հայացքից համեղ ու հյութալի թվացող մրգերը: Մեր Հայաստանի մրգերը ուրիշ են. համով, հոտով, մեջը արև կա շատ:

3. Ինչպիսի՞ առավելություններ տվեց Ձեզ ուսումը արտերկրում: Ի՞նչ տպավորություններ կառանձնացնեք:

Արտերկրում սովորելը առաջին հերթին մեծ հնարավորություն է տալիս փորձի փոխանակման համար: Նոր ընկերներ ես ձեռքբերում, լեզվակիրների հետ ես հաղորդակցվում:

4. Դուք ստացե՞լ էք անհրաժեշտ աջակցությունը ընդունող երկրում, և ի՞նչ աջակցության կարիք ամենաշատը ունեք:

Հենց առաջին օրվանից գտնվել եմ ուշադրության կենտրոնում, բոլոր հարցերիս պատասխանել եմ մեծ սիրով: Կարծում եմ միակ աջակցությունը ապահով ձեռքբերում լինելու զգացումն է: Գործել ինքնուրույն՝ քաջ գիտակցելով, որ ցանկացած պարագայում կան մարդիկ, որոնց վրա կարելի է հույս դնել, օգնություն խնդրել:

5. Դիմագրավել ԲՈՎԻԴ 19-ին՝ լինելով օտար երկրում. ի՞նչ է սա Ձեզ սովորեցրել:

ԲՈՎԻԴ-19-ի ընթացքում օտար երկրում լինելը մեծ փորձություն էր բոլորիս համար: Սկզբում չէինք հավատում կամ ճիշտ չէինք գնահատում ստեղծված իրավիճակը: Հետո, երբ գտնվեցինք կարմիր գոտում, անընդհատ պատվում էին նույն խոսակցությունները, փորձում էինք պահպանել ներքին հանգստությունը, ինչը ամենաքիչն էր ստացվում: Հիշում եմ «Կարո՞ղ ա Corona եմ» արտահայտությունը ինչ-որ շրջան դարձել էր մեր մտավախությունների, առօրյա խոսակցությունների անբաժան մասնիկը, երբ նկատվում էր հազ կամ հիվանդությունը հիշեցնող որևիցե ախտանիշ: Շատ ուրախ եմ, որ անկախ ամեն ինչից մեր դասերը շարունակվում են ընթանալ բնականոն հունով:

